մի անդամն է, նախագահ անդամը, Հանրապետութեան նախագահը եւ ուրիշ ոչինչ, այսինքն՝ հաւասարների մէջ առաջինը:

Հանրապետութեան նախագահի մահուան, հրաժարման կամ որեւէ յանցանքի պատճառով պաշտօնանկ լինելու դէպքում՝ նրան փոխարինում է թիւ 2 խորհրդակիցը: Մնացած խորհրդակիցները, իրենց թիւերի կարգով, մէկմէկ աստիճան բարձրանում են վեր, եւ 13-րդ խորհրդականի բաց մնացած տեղի համար ընտրւում է նորը: Նոյն կարգը պահւում է, եթէ վերոյիշեալ պատճառներով խորհրդակիցներից մէկն ու մէկն է պակասում:

Հանրապետութեան նախագահի պաշտօնատարութեան թղթում բաւական դեղեցիկ կերպով սահմանուած են նրա իրաւունքներն ու պարտականութիւնները — թէեւ ընդհանուր դծերով: Ուստի խօսքը տանք իրեն՝ հեղինակին.—

«Տեսնելով քո արժանաւորութիւնը եւ Ս. Հոգու շնորհն առ քեզ — դրում են ազգ. ժողովի անդամները ընտրուած նախագահին — մենք, Հայաստանի տանուտէրերս եւ ամբողջ ազգի փոխանորդներս, հաստատեցինք եւ ընդունելի արինք, որ դու արժանի ես հայոց նախարարութեան պաշտօնին: Մենք, միախորհուրդ եւ միակամ, իբրեւ մի անձն, տալիս ենք քեզ շնորհաց եւ նախարարութեան սոյն գրութիւնը երեք տարի ժամանակով, որ դու իշխես Հայաստան աշխարհի եւ նրա բնակիչների վրայ, համաձայն Հայաստանի օրէնքների, ազգային ժողովի հրամանների եւ իւրաքանչիւրի գործի:

«Թեզ իշխանութիւն տուինք, որ դու լինես տէր բոլոր հայոց եւ պատրաստ ծառայելու ամէնքին, լինելով հայ ժողովրդի ջատագովն ու պաշտպանը ընդդէմ հայոց օրէնքների եւ հայոց ազգի թշնամիների ու հակառակորդների: Դու ունես իշխանութիւն ամէն բարի գործելու, իսկ ընդդէմ հայոց օրէնքի գործելու ո՛չ: Եւ քո թոյլտուութեամբ ուրիշներն էլ չպիտի գործեն ընդդէմ հայոց օրէնքի եւ գործողների հանդէպ՝ ոչ մի ներում:

«Դրինք հայոց օրէնքի լուծը քո վզին, որ քաղցր է եւ թեթեւ, եթէ օրէնքով ընթանաս դու: Համբերող ու երկայնամիտ եղի՛ր եւ սրտիդ խորքում պահի՛ր հայոց օրէնքի բոլոր յօդուածները, որովհետեւ քո կեանքը եւ քո պատիւը կախուած են օրէնքից: Մի՛ ոտնահարիր օրէնքներից ամենափոքրն անգամ, ապա թէ ոչ՝ կը խորտակուիս դու եւ քո ոսկրները կը փշրուին:

«Տուինք քեզ իշխանութիւն օգտակար լինելու հայոց ամբողջ ժողովրդին եւ չվնասելու ոչ ոքի: Շղթայով կապեցինք քո ինքնակալ կամքը եւ ինքնակալ վարմունքները, որպէսզի հակառակ օրէնքի, չկարողանաս որեւէ մէկին ասել կաղ կամ մորոս (յիմար):

«Տուինք քեզ իշխանութիւն ամբողջ հայ ժողովրդի բերանը լինելու եւ ամուր փակեցինք քո բերանը, որպէսզի մի խօսք չարտասանես ընդդէմ հայոց օրէնքի:

«Տուինք քեզ իշխանութիւն պատերազմ յայտարարելու թշնամիներին եւ խաղաղութիւն հաստատելու հայոց բարեկամների հետ, հայոց տան հրամանով:

«Տուինք քեզ իշխանութիւն կեանք շնորհելու մահապարտներին, մէկ տարուայ մէջ միայն՝ եօթ մարդու, եթէ դա ընդդէմ չի լինի ազգ. ժողովի կամքին: Եւ դու չունես իշխանութիւն մէկն ու մէկի դլխից մի մազ քաշելու, հակառակ օրէնքի:

«Տուինք քեզ վերին հսկողի, տիրապետութեան իշխանութիւն, որ ազդարարես հայոց տանը՝ թշնամիների յարձակման եւ հայոց ազգին ու աշխարհին պատահելիք վտանգների ու նախատինքների մասին: Արթուն եւ պատրաստ կաց. մի՛ դուցէ թշնամին յանկարծ աւերի Հայաստան աշխարհը եւ նեղի հայ ժողովրդին. նրանց բոլոր վնասները քեզնից կը պահանջուին:

«Տուինք քեզ իշխանութիւն հրամայելու հայոց բոլոր զօրքերին ու զօրապետներին, համաձայն օրէնքի: Նաեւ իրաւունք ունես խօսքով եւ երկաթով կապելու քո հրամանի դէմ մեղանչած զօրքն ու զօրականներին, քեզ վրայ վերցնելով քո կատարած բոլոր կալանա-

---

է օրէնքների մեկնաբանող բարձրագոյն հիմնարկութիւնը Հայաստանում: Նոյն այդ օրէնքի մէջ «ծածուկ խորհրդարան» է կոչուած 6 հոգուց բաղկացած մի ինչ որ հիմնարկութիւն, որի մասին այլեւս ոչ մի յիշատակութիւն չենք գտնում ամբողջ դրքի մէջ: